332 Ղովտի նման այսօր ես էլ նեղվում եմ, հուզվում,

1. Ղովտի նման այսօր ես էլ նեղվում եմ, հուզվում,
Ծով արցունքիս կոհակներում լողում եմ, սուզվում:
Անհույս մարդկանց բազմություն է շուրջս ամենուր,
Ասա՛, Հիսուս, ե՞րբ ես գալու, Դու տո՛ւր ինձ մի լուր:

Արի՛, Հիսո՛ւս, քաղցր իմ Տեր, չեմ դիմանում,
Սիրտս հալվեց, հոգիս մաշվեց, տես՝ ինչ եմ լինում:
Արի՛, Հիսո՛ւս, քաղցր իմ Տեր, չեմ դիմանում,
Սիրտս հալվեց, մաշվեց, տես՝ ինչ եմ լինում:

2. Աղաչում եմ, օրհնյալ Տերս, դարձի՛ բեր նրանց
Եվ Հոգովդ կենդանացրո՛ւ, չմնան մեռած,
Հանի՛ր նրանց այդ վիճակից՝ ապրեն սրբությամբ
Ու քեզ պաշտեն հոգով, սրտով և ճշմարտությամբ: